



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

11.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԱՑ-ԼՕ-2020/43

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական
պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ «Ինտերմեդ
Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու
իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված
ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.02.2020թ.-ի թիվ ՊՆ/02/364-2020 գրության հիման վրա, 06.02.2020թ.-ին «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՅ-ԼՕ-2020/43 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 19.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.02.2020թ.-ի թիվ ՊՆ/02/364-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է որպես ընտրված մասնակից: Վերջինս գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ սահմանված կարգով, www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումների միջոցով ծանուցվել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ: Ներկայացված որակավորման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ

հրավերի պահանջների նկատմամբ և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որոնք հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պայմաններին չհամապատասխանող:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ, 45-րդ և 48-րդ կետերը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որոշել է «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 12.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 21.02.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ի պատասխան ՊՆ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշման հայտնում ենք հետևյալը.

«Պաշտպանության նախարարությունն իր դիրքորոշման հիմքում դրել է հետևյալ հանգամանքները.

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 50-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքն արտադրող կազմակերպության Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող ներկայացուցչի կողմից տրված տեղեկանքը՝ արտադրող ընկերության կողմից 0,01 մմ շեղումը թույլատրելի համարելու մասին, մասնակցի կողմից գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել.

Սխալ նշված կամ ընդհանրապես չնշված ծածկագիրը չէր կարող մասնակցի մոտ շփոթություն առաջացնել.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցն իրավունք ուներ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու իրավերի պարզաբանում, եթե մասնակցի կողմից շուկայի ուսումնասիրության արդյունքում պարզվեր, որ տվյալ գնման առարկաներն առանց թույլատրելի շեղումների չեն արտադրվում, որը վերջինիս կողմից չի իրականացվել,

Գնահատող հանձնաժողովը որոշել է 50-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի 4-րդ կետով նշված Կորտիկալ պտուտակի տրամագծի մեծության/3.5 ±0.01 մմ/ շտկման վերաբերյալ հավկյալ ծանուցում չուղարկել մասնակցին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից տեխնիկական բնութագրի 8-րդ կետով նշված մեծությունը չշտկելու հանգամանքն արդեն իսկ հանգեցնում է 50-րդ չափաբաժնով ներկայացված հայտի մերժմանը՝ համաձայն Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի.

ՀՀ ՊՆ և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 14.03.2019թ. կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-9/35-1 պայմանագրում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից միևնույն գնման առարկայի համար նման շեղումներ չի ներկայացվել նշվել են հստակ չափսեր, որից հետևում է, որ շուկայում առկա են տվյալ գնման առարկաներն՝ առանց թույլատրելի շեղման:»:

Առաջին կետի վերաբերյալ հայտնում ենք, որ շտկման փուլում մասնակիցը շտկված տեխնիկական բնութագրից բացի հավելյալ տեղեկանք ներկայացնելու հնարվորություն չունի, ուստի տեղեկանքն այդ փուլում չէր կարող տրամադրվել գնման հանձնաժողովին:

Եկրորդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ ծանուցման մեջ սխալ նշված կամ ընդհանրապես չնշված ծածկագրի պարագայում գնման հանձնաժողովը պարտավոր էր նոր ծանուցում ուղարկել:

Երրորդ և չորրորդ կետերի վերաբերյալ հայտնում ենք, որ ցանկացած հստակ պարամետր (ցուցանիշ) ունի իր չափսերի գործարանային արտադրանքի թույլատրելի շեղում, ուստի 50-րդ չափաբաժնի 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում առկա անհամապատասխանություններն շտկելու պատվիրատուի պահանջն անհիմն էր, քանի որ «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ն թույլատրելի շեղումներ նշել է 50-րդ չափաբաժնի 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի բոլոր պտուտակների և ակոսների համար, և շտկման պահանջի փոխարեն կարելի էր ուսումնասիրել առաջարկը և ներկայացնել մասնագիտական եզրակացություն՝ անհրաժեշտության դեպքում մասնակցից պահանջելով արտադրողի նշված ապրանքների չափսերի թույլատրելի շեղումների չափը, ինչը չի արվել: Փոխարենը

պահանջվել է շտկել այդ շեղումներից միայն ակոսների 3.5 մմ փրամագծին վերաբերող «Համապատասխանող» 0.01 շեղումները (այն էլ ոչ բոլոր կետերի մասով՝ 4-րդ կետը վրիպել են), քանի որ ենթադրվում է, որ հաշվի է առնվել, որ -0,01 մմ շեղման դեպքում կստացվի 3,49մմ՝ առանց հաշվի առնելով այն փաստը, որ չնայած հրավերում շար պարամետրեր (ցուցանիշներ) նշված են հստակ՝ առանց արտադրողների արտադրանքի թույլտրելի շեղումների, միևնույն է ցանկացած արտադրող ցանկացած ապրանքի համար ունի ստանդարտներով հաստատված չափսերի թույլատրելի շեղումներ, ինչը նշել ենք մեր առաջարկում: Որևէ ապրանքի թույլատրելի շեղումները որևէ կերպ չեն անդրադառնում ապրանքի, սույն դեպքում կորտիկալ պրոուրակի, որակական և գործառնական հատկանիշների վրա (նշվածի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում կարող ենք ներկայացնել արտադրող ընկերության կողմից հավաստում):

Վերոնշյալի հիման վրա կարող ենք փաստել, որ սույն դեպքում առկա է թույլատրելի շեղում, որի պարագայում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն հրավերի պարզաբանում պահանջելու անհրաժեշտություն չի ունեցել:

Հարկ է նաև արձանագրել, որ պատվիրատուն ընդունում է իր ծանուցման մեջ, թե՛ 4-րդ կետով նշված կորտիկալ պրոուրակի փրամագծի մեծության $/3.5 \pm 0.01\text{մմ}/$ շտկման վերաբերյալ բացթողնման, և թե՛ շտկված փրամագծերը սխալ ծածկագրով գնման գործընթացի քարտուղարին ուղարկելու իր վրիպակները, սակայն չի ընդունում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 50-րդ չափաբաժնի թվով 5 փողերից 5-րդ կետի շտկման մեխանիկական վրիպակը:

Հինգերորդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ խոսքը կրկին թույլատրելի շեղումների մասին է, որը կարող է նշվել կամ չնշվել (ասենք. 0.5լ ծավալով փարայի պարամետրը (ցուցանիշը) հենց 0.5լ է, օրինակ դրանից 2մլ +կամ- թույլատրելի շեղումը նշելը կամ չնշելը չի նշանակում, որ մատակարարվել է այլ բնութագրով ապրանք), ուստիև մասնակցի կողմից նշված թիվ ԷԱՃԱՊՁԲ-9/35-1 պայմանագրում շեղումների մասին նշում չի կատարվել, որը չի կարող դիտվել անհամապատասխանություն:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ինչպես N 5 արձանագրությամբ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ հայտը մերժելու մասին որշմամբ, այնպես էլ՝ պատվիրատուի կողմից ներկայացված պատասխանում պատվիրատուն նշել է, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ կողմից 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված մեծությունները չեն համապատասխանում հրավերով սահմանված մեծությունների թույլատրելի շեղումներին: Նշվածից հետևում, որ՝

- պատվիրատուն ևս ընդունում է, որ ցանկացած հստակ սահմանված մեծություն/չափս ունի ստանդարտներով հաստատված մեծության/չափսերի թույլատրելի շեղումներ, և

- ըստ էության մերժման հիմքում դրվել է թույլատրելի շեղումներին անհամապատասխանությունը:

Նման պայմաններում, հիմք ընդունելով նաև մեր կողմից ներկայացված տեղեկանքը, կարող ենք արձանագրել, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված տվյալներում առկա չէ անհամապատասխանություն 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված մեծությունների համար սահմանված մեծությունների թույլատրելի շեղումներին:»:

4. ՍՑ-ԼՕ-2020/43 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Վ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.11.2019թ.-ին հայտարարվել է «ՎՎ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.12.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 27.12.2019թ.-ի «ՎՎ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-16-րդ, 21-31-րդ, 33-53-րդ, 66-67-րդ և 71-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՎՎ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին մասնակից կողմից իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.01.2020թ.-ի տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

08.01.2020թ.-ին գնումների համակարգող Մ. Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

«Ինտերմեդ. Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված էին.

- 1) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 3) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 6) կետով՝ ակոսի տրամագիծը՝ $3.5 + 0.01$ մմ,
- 7) կետով՝ Կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է $3.5 - 0.01$ մմ,
- 8) կետով՝ Արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է $3.5 + 0.01$ մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4.0 ± 0.01 մմ:

«Ինտերմեդ. Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում /Հավելված 3.1/ նշված մեծությունները չէին համապատասխանում հրավերով սահմանված մեծությունների թույլատրելի շեղումներին, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրությամբ, 15.01.2020թ.-ին, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է երեք աշխատանքային օրով

կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը /16.01.2020թ.-20.01.2020թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն ուղարկված ծանուցմամբ նշվել են հետևյալ առկա անհամապատասխանությունները ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված են.

1) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,

3) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,

6) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,

7) կետով՝ Կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է $3.5 - 0.01$ մմ,

8) կետով՝ Արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է 3.5 ± 0.01 մմ, սպոնգիոզ պտուտակներինը $4,0 \pm 0.01$ մմ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն առաջարկել է Ընկերությանը շտկել արձանագրված, վերը նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 24.01.2020թ.-ին հաշվի առնելով, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները շտկվել էին, բացառությամբ 8) կետով՝ սպոնգիոզ պտուտակների տրամագծի մեծությունը / $4,0 \pm 0.01$ մմ/ և հիմք ընդունելով Կարգի 32-րդ, 45-րդ և 48-րդ կետերի և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԼԼՊՅԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 50-րդ չափաբաժնով ներկայացված հայտը մերժել:

Նույն արձանագրությամբ՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի հրավերի 50-րդ չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված գնային առաջարկը 27.12.2019թ.-ին տեղի ունեցած բանակցությունների ավարտից հետո գերազանցում են նշված չափաբաժնով նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության պահանջները, գնահատող հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 50-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի (այսուհետ

նան՝ Հավելված 1) տեխնիկական բնութագրով 50-րդ չափաբաժնի համար սամանվել է հետևյալ բնութագիրը.

50	33141224/53	վիրաբուժական գործիքներ բազմակումպոնենտ	<p>Կլինիկայում առկա նախաբազկի, անրակի, մեծ ոլոքի պրոքսիմալ կոտրվածքներ բուժման համար նախատեսված անատոմյական, մոդելավորված արգելափակվող թիթեղների եւ պտուտակների համալրում</p>	<p>Անրակի կոտրվածքների բուժման համար նախատեսված սահմանափակ ճնշմամբ, կեռիկով արգելափակվող թիթեղների եւ տեղադրման համար նախատեսված արգելափակվող պտուտակներ:</p> <p>1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ երկարությունը 14, 16, 18 եւ 20 մմ ի սահմաններում +\ - 0.5 մմ: Պետք է լինի ունիվերսալ ակոսով, կորտիկալ եւ սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Պետք է ունենա ինքնակտրող, ծակող, փամփուշտաձեւ ծայր պետք է թույլ տա առանց նախնական ակոսի ձեւավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը պետք է հավասար լինի ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը պետք է լինի կոնաձեւ, ունենա երկակուսանի ֆիքսող պարոյր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձեւ: Պտուտակի մարմնի տրամագիծը 2,8 -3,0 մմ-ի սահմաններում, ակոսի տրամագիծը՝ 3,5 -3,6 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 4,9 -5,1 մմ: Պատրաստված լինի չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>1.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 14 մմ- 10 հատ:</p> <p>1.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 16 մմ - 10 հատ:</p> <p>1.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 18 մմ - 10 հատ:</p> <p>1.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 20 մմ - 10 հատ:</p> <p>2.) Սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով՝</p> <p>2.1.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12 մմ- 2 հատ:</p> <p>2.2.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12 մմ-2 հատ:</p> <p>2.3.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15 մմ-2 հատ:</p> <p>2.4.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15 մմ-2 հատ:</p> <p>2.5.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12 մմ-2 հատ:</p> <p>2.6.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12 մմ-2 հատ:</p> <p>3.) 3.5 մմ տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ, 38 մմ, 40 մմ, 60 մմ եւ 65 մմ երկարությամբ- Արգելափակվող պտուտակ- երկարությունը 38, 40, 60, 65 մմ ի չափով, +\ - 0.5 մմ: Պետք է լինի ունիվերսալ ակոսով, կորտիկալ եւ սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Պետք է ունենա ինքնակտրող, ծակող, փամփուշտաձեւ ծայր պետք է թույլ տա առանց նախնական ակոսի ձեւավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը պետք է հավասար լինի ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը պետք է լինի կոնաձեւ, ունենա երկակուսանի ֆիքսող պարոյր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձեւ: Պտուտակի մարմնի տրամագիծը 2,8 -3,0 մմ-ի սահմաններում, ակոսի տրամագիծը՝ 3,5 -3,6 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 4,9 -5,1 մմ: Պատրաստված լինի տիտան ալյումինում վանադիում</p>
----	-------------	--	---	---

			<p>համաձուլվածքից: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը: Պատրաստված տիտանի համաձուլվածքից:</p> <p>3.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 38մմ -13հատ:</p> <p>3.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 40 մմ-13 հատ:</p> <p>3.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 60 մմ -13հատ:</p> <p>3.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 65 մմ-13 հատ:</p> <p>4.) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 38 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը պետք է լինի 3,5մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Պետք է ունենա ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական նշիչի օգտագործման համար: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>4.1) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 38 մմ.-8 հատ:</p> <p>5.) Մեծ ոլոքի պրոքսիմալ կոտրվածքների բուժման համար նախատեսված, 3,5մմ տրամագծով անցքերով թիթեղ: Պետք է ունենա աջ եւ ձախ տարբերակներ, պատրաստված մաքուր տիտանից (Ti cp) : Դիաֆիզար հատվածում անցքերի քանակը պետք է լինի 6 եւ 8, թիթեղի երկարությունը համապատասխանաբար՝ 107 եւ 133մմ: Թիթեղը պետք անատոմյաին համապատասխան մոդրավորված լինի: Պետք է հնարավորություն տա սուբստրուկտուրալ մտցնել 4 ից ոչ պակաս արգելափակվող պտուտակներ, քիչ ինվազիվ տեխնիկայով տեղադրման համար: Թիթեղի պրոքսիմալ հատվածը պետք է թույլ տա տեղադրել առնվազն 4 արգելափակող պտուտակ հորիզոնական հարթությանը զուգահեռ: Պրոքսիմալ հատվածի մնացած պտուտակների կողմնորոշումը պետք է լինի համակենտրոն: Պրոքսիմալ հատվածը պետք է ունենա առնվազն 3 անցք 2մմ տրամագծով ձողերով նախնական ամրացման համար նախատեսված: Պտուտակները պետք է արգելափակվեն գլխիկի վրա եւ անցքի մեջ ունենացած ակոսի հաշվին: Պտուտակները չպետք է արգելափակվեն տափողակների միջոցով: Ակոսը անցքի մեջ պետք է լինի կոնաձեւ, իսկ պտուտակի գլխիկը պետք է արգալափակումից հետո բարձր մնա թիթեղից: Դիաֆիզար հատվածը պետք է ունենա կոմբինացված անցքեր, որը հնարավորություն կտա օգտագործել նաեւ կորտիկալ պտուտակներ: Դիաֆիզար հատվածի վերջում թիթեղի եզրը պետք է լինի կոնաձեւ, ատրավմատիկ մեթոդով ներդնելու համար: Առավել դիստալ կոմբինացված անցքը պետք է հնարավորություն տա օգտագործել կոմպրեսիա արաջացնող սարքը: Պետք է ունենա լազերային մակնշում տարբերակող կողով: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>5.1.) Աջ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.2.) Ձախ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով - 1 հատ:</p> <p>5.3.) Աջ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.4.) Ձախ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով - 1 հատ:</p> <p>6.0) Արգելափակվող ինքնակտրող պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ- երկարությունը 12. 14. 16 , 18, 20, 22,մմ +\ - 0.5 մմ: Պետք է լինի ունիվերսալ ակոսով, կորտիկալ եւ սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Պետք է ունենա ինքնակտրող, ծակող, փամփուշտաձեւ ծայր պետք է թույլ տա առանց նախնական ակոսի ձեւավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը պետք է հավասար լինի ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը պետք է լինի կոնաձեւ, ունենա երկակոսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձեւ: Պտուտակի մարմնի</p>
--	--	--	---

			<p>տրամագիծը 2,8 -3,0 մմ-ի սահմաններում, ակոսի տրամագիծը՝ 3,5 -3,6 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 4,9 -5,1 մմ: Պարտաստված լինի չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը: Պատրաստված տիտանի համաձուլվածքից:</p> <p>6.1.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 12մմ-3հատ:</p> <p>6.2.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 14 մմ -6հատ:</p> <p>6.3.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 16 մմ -20հատ:</p> <p>6.4.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 18 մմ -20հատ:</p> <p>6.5.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 20 մմ -11 հատ:</p> <p>6.6.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 22 մմ -8հատ:</p> <p>7.)3.5մմ կորտիկալ ինքնակտրող, տիտանի համաձուլվածքից պտուտակ, T15, երկարությունը 16, 18,20 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը պետք է լինի 3,5մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձեւ T15: Պետք է ունենա ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական նշիչի օգտագործման համար: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>7.1) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 16 մմ.- 2 հատ</p> <p>7.2) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 18 մմ.-8 հատ</p> <p>7.3) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 20 մմ.-3 հատ</p> <p>8.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 7-8 Սահմանափակ կոնտակտով անկյունային կայունությամբ, 3,5մմ անցքերով արգելափակվող թիթեղ: Կոմպրեսիոն անցքերի քանակը՝ 7, 8 : Թիթեղը պետք է պատրաստված լինի մաքուր տիտանից՝ (Ti cp Կոմպրեսիոն անցքերը պետք է թույլ տան տեղադրել կամ կոնաձեւ ֆիքսվող երկակոսանի արգելափակվող պտուտակներ, կամ ստանդարտ պտուտակներ չեզոք կամ սեղմող դիրքերում: Անցքերի ներքին եզրերը տաշվածքները երկայանական եւ լանյական հարթություններում պետք է ապահովեն ստանդարտ պտուտակների անկյան կարգավորումը: Քիչ ինվազիվ եղանակով տեղադրման համար երկու կողմերից պետք է ունենա սեպաձեւ սրացումներ: Պետք է ունենա տիտանե իմպլանտների գունային կոդավորում:Թողարկման համար, իմպլանտի տեղադրման վերահսկողության իրականացման համար: Արգելափակվող եւ կորտիկալ պտուտակների տրամագիծը պետք է լինի 3,5մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4,0մմ: Անցքում ստանդարտ պտուտակի առավելագույն շեղման աստիճանը +/- 40 աստիճան թիթեղի երկայնքով, +/- 15 աստիճան ուղղահայաց:</p> <p>8.1.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 7 , տիտանից- 5 հատ:</p> <p>8.2.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 8 , տիտանից 5 հատ:</p>
--	--	--	---

Ընկերության կողմից թիվ 50 չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրի համաձայն՝

50	Կլինիկայում առկա նախաբազկի, անոթային, մեծ ոլոքի պրոքսիմալ կտրվածքներ բուժման համար նախատեսված անատոմյական, մոդելավորված արգելափակվող թիթեղների եւ պտուտակների համալրում	Depuy Synthes	Johnson & Johnson	<p>Անոթային կտրվածքների բուժման համար նախատեսված սահմանափակ ճնշմամբ, կեռիկով արգելափակվող թիթեղներ ն տեղադրման համար նախատեսված արգելափակվող պտուտակներ:</p> <p>1.) 3,5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ երկարությունը 14, 16, 18, 20 մմի սահմաններում ± 0.5 մմ: Ունիվերսալ ակոսով է, կորտիկալ և սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար; Ունեն ինքնակտրող, ծակող, փամփուշտաձև ծայր, որը թույլ է տալիս առանց նախնական ակոսի ձևավորման տեղագրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը հավասար է ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը կոնաձև է, ունեն երկակուսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձև է Պտուտակի մարմնի տրամագիծը 2.9 ± 0.05 մմ-ի, ակոսի տրամագիծը 3.5 ± 0.01 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 5.0 ± 0.05 մմ: Պատրաստված է չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Առանձին փաթեթավորված են, որտեղ պարտադիր նշված են չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը:</p> <p>1.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 14 մմ- 10 հատ: 1.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 16 մմ - 10 հատ: 1.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 18 մմ - 10 հատ: 1.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 20 մմ - 10 հատ:</p> <p>2.) Սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով 2.1.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12 մմ- 2 հատ: 2.2.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12 մմ-2 հատ: 2.3.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անթերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15 մմ-2 հատ: 2.4.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15 մմ-2 հատ: 2.5.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12 մմ-2 հատ: 2.6.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12 մմ-2 հատ:</p> <p>3.) 3.5 մմ տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ, 38 մմ, 40 մմ, 60 մմ եւ 65 մմ երկարությամբ - Արգելափակվող պտուտակ-երկարությունը 38, 40, 60, 65 մմ ի չափով, ± 0.5 մմ: Ունիվերսալ ակոսով է, կորտիկալ և սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Ունի ինքնակտրող, ծակող, փամփուշտաձև ծայր, որը թույլ է տալիս առանց նախնական ակոսի ձևավորման տեղադրել ոսկրի մեջ; Գլխիկի ակոսի քայլը հավասար է ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը կոնաձև է, ունի երկակուսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձև է Պտուտակի մարմնի տրամագիծը 2.9 ± 0.05 մմ է, ակոսի տրամագիծը 3.5 ± 0.01 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 5.0 ± 0.05 մմ: Պատրաստված է տիտան պլյուրինում վակույում համաձուլվածքից: Առանձին փաթեթավորված են, որտեղ պարտադիր նշված է չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը: Պատրաստված են տիտանի համաձուլվածքից:</p> <p>3.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 38 մմ-13 հատ: 3.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 40 մմ-13 հատ: 3.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 60 մմ -13 հատ: 3.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 65 մմ-13 հատ:</p> <p>4.) 3.5 մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությւ _ 38 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը $3,5 \pm 0.01$ մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Ունի ինքնակ ստող ծայր, նախատեսված սահից նախնական և շիտի օգտագործման համար Առաքվում է առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը՝</p> <p>4,1) 3,5 մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 38 Ամ.- 8</p>
----	---	---------------	-------------------	---

			<p>հատ:</p> <p>5.) Մեծ ոլոքի պրոբսիմալ կոտրվածքների բուժման համար նախատեսված, 3.5մ տրամագծով անցքերով թիթեղ: Ունի աջ և ձախ տարբերակներ, պատրաստված է մաքուր տիտանից (Ti cp) : Դիաֆիզար հատվածում անցքերի քանակը 6 և 8, թիթեղների երկարությունը նամապատասխանաբար 107 և 133մմ: Թիթեղները ատետոմային համապատասխան մոդուլավորված են: հնարավոր է սուբխոնդրալ մտցնել 4 ից ոչ պակաս արգելափակվող պտուտակներ, քիչ ինվազիվ տեխնիկայով տեղադրման համար: Թիթեղի պրոբսիմալ հատվածը թույլ է տալիս տեղադրել առկա 4 արգելափակող պտուտակ հորիզոնական հարթությանը զուգահեռ: Պրոբսիմալ հատվածի մնացած պտուտակների կալմնորուշումը համակենտրոն է: Պրոբսիմալ հատվածը ունի առնվազն 3 անցք 2մմ տրամագծով ձողերով նախնական ամրացման համար նախատեսված: Պտուտակները արգելափակվում են գլխիկի վրա անցքի մեջ ունենացած ակոսի հաշվին: Պտուտակները չեն արգելափակվում տափողակների միջոցով: Ակոսը անցքի մեջ կոնաձև է, իսկ պտուտակի գլխիկը արգելափակումից հետո բարձր է մնում թիթեղից: Գիաֆիզար հատվածը ունի կոմբինացված անցքեր, որը հնարավորություն է տալիս օգտագործել նաև կորտիկալ պտուտակներ: Դիաֆիզար հատվածի վերջում թիթեղի եզրը կոնաձև է, ատրավմատիկ մեթոդով ներդնելու համար: Առավել դիստալ կոմբինացված անցքը հնարավորություն են տալիս օգտագործել կոմպրեսիա արաջացնող սարք: Ունեն լազերային մակնշում, տարբերակող կողով: Առանձին փաթեթավորված են. որտեղ պարտադիր նշված է չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը:</p> <p>5.1.) Աջ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.2.) Ձախ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով - 1 հատ:</p> <p>5.3.) Աջ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.4.) Ձախ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով - 1 հատ:</p> <p>6.0) Արգելափակվող ինքնակտրող պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ- երկարությունը 12. 14. 16 , 18. 20, 22,մմ +v 0.5 մմ: Ունիվերսալ ակոսով են, կորտիկալ Ա սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Ունեն ինքնակտրող, ծակող, փամփուշտ:AU ծայր, որը թույլ է տալիս առանց նախնական ակոսի ձևավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը հավասար է ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը կոնաձև է, ունի երկակոսակի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձև է Պտուտակի մարմնի տրամագիծը 2.9 ±0.05 մմ-ի է , ակոսի տրամագիծը 3.5 +0.01 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 5,0 ±0.05 մմ: Պարաստված է չմազնիսացող տիտանի համաձուլվածքից: Առանձին փաթեթավորված են, որտեղ պարտադիր նշված են չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը: Պատրաստված են սփուռանի համոլավիոձքից:</p> <p>6.1.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 12մմ-3 հատ:</p> <p>6.2.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 14 մմ -6հատ:</p> <p>6.3.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 16 մմ -20հատ:</p> <p>6.4.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 18 մմ -20հատ:</p> <p>6.5.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 20 մմ -11 հասս</p> <p>6.6.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 22 մմ -8 հատ:</p> <p>7.)3.5մմ կորտիկալ ինքնակտրող, տիտանի համաձուլվածքից պտուտակ, T15, երկարությունը 16, 18,20 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը կազմում է 3.5 -0.01մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Ունի ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական ևցիչի օգտագործման համար: Առանձին փաթեթավորված է, որտեղ պարտադիր նշված են չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը:</p> <p>7.1)3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 16 մմ. - 2 հատ</p> <p>7.2)3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 18 մմ. -8 հատ</p> <p>7.3)3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 20 մմ. -3 հատ</p> <p>8.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով,</p>
--	--	--	--

			<p>անցքերի քանակը 7-8 Սահմանափակ կոնտակտով անկյունային կայունությամբ, 3,5մմ անցքերով արգելափակվող թիթեղ: Կոմբինացված անցքերի քանակը 7, 8 : Թիթեղը պատրաստված է մաքուր տիտանից (Ti cp Կոմբինացված անցքերը թույլ են տալիս տեղադրել կամ կոնաձև ֆիքսվող երկկոսանի արգելափակվող պտուտակներ, կամ ստանդարտ պտուտակներ չեզոք կամ սեղմող դիրքերում: Անցքերի ներքին եզրերը տաշվածքներ երկայանական և լանջական հարթություններում, որը ապահովում է ստանդարտ պտուտակների անկյան կարգավորումը: Քիչ ինվազիվ եղանակով տեղադրման համար երկու կողմերից ունի սեպածև սրացումներ: Ունի տիտանե իմպլանտների գունային կողավորում, թողարկման համար, իմպլանտի տեղադրման վերահսկողության իրականացման համար: Արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է 3.5 ±0.01 մմ, սպունգիոզ պտուտակներինը 4,0±0.01մմ: Անցքում ստանդարտ պտուտակի առավելագույն շեղման աստիճանը +/- 40 աստիճան թիթեղի երկայնքով, +/- 15 աստիճան ուղղահայաց:</p> <p>8.1.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 7, տիտանից- 5 հատ:</p> <p>8.2.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 8, տիտանից 5 հատ:</p>
--	--	--	---

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված

դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում

հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հ պաշտպանության նախարարության կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.11.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2019թ.-ի թիվ 4 արձանագրության հիման վրա ընթացակարգի 1-16-րդ, 21-31-րդ, 33-53-րդ, 66-67-րդ և 71-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին մասնակից կողմից իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.01.2020թ. տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

08.01.2020թ.-ին գնումների համակարգող Մ. Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված էին.

- 1) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 3) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 6) կետով՝ ակոսի տրամագիծը՝ $3.5 + 0.01$ մմ,
- 7) կետով՝ կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է $3.5 - 0.01$ մմ,
- 8) կետով՝ արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է $3.5 + 0.01$ մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4.0 ± 0.01 մմ:

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում /Հավելված 3.1/ նշված մեծությունները չէին համապատասխանում հրավերով սահմանված մեծությունների թույլատրելի շեղումներին, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրությամբ, 15.01.2020թ.-ին, Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, որոշել է երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը /16.01.2020թ.-20.01.2020թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն ուղարկված ծանուցմամբ նշվել են հետևյալ առկա անհամապատասխանությունները ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված են.

- 1). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 3). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 6). կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 7) կետով՝ կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է $3.5 - 0.01$ մմ,
- 8) կետով՝ արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է 3.5 ± 0.01 մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4.0 ± 0.01 մմ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն առաջարկել է Ընկերությանը շտկել արձանագրված, վերը նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ.-ի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 24.01.2020թ.-ի հաշվի առնելով, որ «Ինտերմեդ Գրուպ»

ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունները շտկվել էին, բացառությամբ 8) կետով՝ սպոնգիոզ պտուտակների տրամագծի մեծությունը /4,0+0.01 մմ/ և հիմք ընդունելով Կարգի 32-րդ, 45-րդ և 48-րդ կետերի և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԼԼՊՅԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 50-րդ չափաբաժնով ներկայացված հայտը մերժել:

Նույն արձանագրությամբ՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի հրավերի 50-րդ չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ար-ՄԵդիկա» ՍՊԸ-ի, կողմից ներկայացված գնային առաջարկը 27.12.2019թ.-ին տեղի ունեցած բանակցությունների ավարտից հետո գերազանցում են նշված չափաբաժնով նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերության պահանջները, որոշել է ընթացակարգի 50-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԼՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածի (այսուհետ նաև՝ Հավելված 1) տեխնիկական բնութագրով 50-րդ չափաբաժնի համար սամանվել է հետևյալ բնութագիրը.

50	33141224/53	վիրաբուժական գործիքներ բազմակրոմպոնենտ	Կլինիկայում առկա նախաբազկի, անրակի, մեծ ոլոքի պրոքսիմալ կտրվածքներ բուժման համար նախատեսված անատոմյական, մոդելավորված արգելափակվող թիթեղների եւ պտուտակների համալրում	<p>Անրակի կտրվածքների բուժման համար նախատեսված սահմանափակ ճնշմամբ, կեղիկով արգելափակվող թիթեղների եւ տեղադրման համար նախատեսված արգելափակվող պտուտակներ:</p> <p>1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ երկարությունը 14, 16, 18 եւ 20 մմ ի սահմաններում +\ - 0.5 մմ: Պետք է լինի ունիվերսալ ակոսով, կրտսիկալ եւ սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Պետք է ունենա ինքնակտրող, ծակող, փամփուշտաձեւ ձայր պետք է թույլ տա առանց նախնական ակոսի ձեւավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը պետք է հավասար լինի ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը պետք է լինի կոնաձեւ, ունենա երկակոսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձեւ: Պտուտակի մարմնի տրամագիծը 2,8 -3,0 մմ-ի սահմաններում, ակոսի տրամագիծը՝ 3,5 -3,6 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 4,9 -5,1 մմ: Պատրաստված լինի չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>1.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 14 մմ - 10 հատ:</p> <p>1.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 16 մմ - 10 հատ:</p> <p>1.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 18 մմ - 10 հատ:</p> <p>1.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 20 մմ - 10 հատ:</p> <p>2.) Սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ</p>
----	-------------	--	---	---

			<p>կեռիկով՝</p> <p>2.1.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12մմ- 2հատ:</p> <p>2.2.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12մմ-2 հատ:</p> <p>2.3.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15մմ-2 հատ:</p> <p>2.4.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15մմ-2 հատ:</p> <p>2.5.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12մմ-2 հատ:</p> <p>2.6.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12մմ-2 հատ:</p> <p>3.) 3.5 մմ տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ, 38մմ, 40մմ, 60մմ եւ 65մմ երկարությամբ- Արգելափակվող պտուտակ- երկարությունը 38, 40, 60, 65մմ ի չափով, +- 0.5 մմ: Պետք է լինի ունիվերսալ ակոսով, կորտիկալ եւ սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Պետք է ունենա ինքնակտրող, ծակող, փամփուշտածեւ ծայր պետք է թույլ տա առանց նախնական ակոսի ձեւավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը պետք է հավասար լինի ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը պետք է լինի կոնածեւ, ունենա երկակոսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղածեւ: Պտուտակի մարմնի տրամագիծը 2,8 -3,0 մմ-ի սահմաններում, ակոսի տրամագիծը՝ 3,5 -3,6 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 4,9 -5,1 մմ: Պատրաստված լինի տիտան ալյումինում վանադում համաձուլվածքից: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը: Պատրաստված տիտանի համաձուլվածքից:</p> <p>3.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 38մմ -13հատ:</p> <p>3.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 40 մմ-13 հատ:</p> <p>3.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 60 մմ -13հատ:</p> <p>3.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 65 մմ-13 հատ:</p> <p>4.) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 38 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը պետք է լինի 3,5մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղածեւ T15: Պետք է ունենա ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական նշիչի օգտագործման համար: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>4.1) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 38 մմ.- 8 հատ:</p> <p>5.) Մեծ ոլոքի պրոքսիմալ կտրվածքների բուժման համար նախատեսված, 3,5մմ տրամագծով անցքերով թիթեղ: Պետք է ունենա աջ եւ ձախ տարբերակներ, պատրաստված մաքուր տիտանից (Ti cp) : Դիաֆիզար հատվածում անցքերի քանակը պետք է լինի 6 եւ 8, թիթեղի երկարությունը համապատասխանաբար՝ 107 եւ 133մմ: Թիթեղը պետք անատոմյաին համապատասխան մոդրավորված լինի: Պետք է հնարավորությամբ տա սուբստրակտ մտցնել 4 ից ոչ պակաս արգելափակվող պտուտակներ, քիչ ինվազիվ տեխնիկայով տեղադրման համար: Թիթեղի պրոքսիմալ հատվածը պետք է թույլ տա տեղադրել առնվազն 4 արգելափակաող պտուտակ</p>
--	--	--	--

			<p>հորիզոնական հարթությանը զուգահեռ: Պրոքսիմալ հատվածի մնացած պտուտակների կողմնորոշումը պետք է լինի համակենտրոն: Պրոքսիմալ հատվածը պետք է ունենա առնվազն 3 անցք 2մմ տրամագծով ձողերով նախնական ամրացման համար նախատեսված: Պտուտակները պետք է արգելափակվեն գլխիկի վրա եւ անցքի մեջ ունենացած ակոսի հաշվին: Պտուտակները չպետք է արգելափակվեն տափողակների միջոցով: Ակոսը անցքի մեջ պետք է լինի կոնաձեւ, իսկ պտուտակի գլխիկը պետք է արգալափակումից հետո բարձր մնա թիթեղից: Դիաֆիզար հատվածը պետք է ունենա կոմբինացված անցքեր, որը հնարավորություն կտա օգտագործել նաեւ կորտիկալ պտուտակներ: Դիաֆիզար հատվածի վերջում թիթեղի եզրը պետք է լինի կոնաձեւ, ատրավմատիկ մեթոդով ներդնելու համար: Առավել դիստալ կոմբինացված անցքը պետք է հնարավորություն տա օգտագործել կոմպրեսիա արաջացնող սարքը: Պետք է ունենա լազերային մակնշում տարբերակող կողով: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>5.1.) Աջ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով- 1 հատ: 5.2.) Ձախ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով - 1 հատ: 5.3.) Աջ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով- 1 հատ: 5.4.) Ձախ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով - 1 հատ:</p> <p>6.0) Արգելափակվող ինքնակտրող պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ- երկարությունը 12. 14. 16 , 18, 20, 22,մմ +\ - 0.5 մմ: Պետք է լինի ունիվերսալ ակոսով, կորտիկալ եւ սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Պետք է ունենա ինքնակտրող, ծակող, փամփուշտաձեւ ծայր պետք է թույլ տա առանց նախնական ակոսի ձեւավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը պետք է հավասար լինի ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը պետք է լինի կոնաձեւ, ունենա երկակոսանի ֆիքսող պարոպր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձեւ: Պտուտակի մարմնի տրամագիծը 2,8 -3,0 մմ-ի սահմաններում, ակոսի տրամագիծը՝ 3,5 -3,6 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 4,9 -5,1 մմ: Պարտաստված լինի չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը: Պատրաստված տիտանի համաձուլվածքից:</p> <p>6.1.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 12մմ-3 հատ: 6.2.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 14 մմ -6հատ: 6.3.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 16 մմ -20հատ: 6.4.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 18 մմ -20հատ: 6.5.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 20 մմ -11 հատ: 6.6.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 22 մմ -8հատ:</p> <p>7.) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող, տիտանի համաձուլվածքից պտուտակ, T15, երկարությունը 16, 18,20 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը պետք է լինի 3,5մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձեւ T15: Պետք է ունենա ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական նշիչի օգտագործման համար: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:</p> <p>7.1) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 16 մմ.- 2 հատ 7.2) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 18 մմ.-8 հատ 7.3) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 20 մմ.-3 հատ</p> <p>8.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի</p>
--	--	--	---

				<p>անցքերով, անցքերի քանակը 7-8 Սահմանափակ կոնտակտով անկյունային կայունությամբ, 3,5մմ անցքերով արգելափակվող թիթեղ: Կոմբինացված անցքերի քանակը՝ 7, 8 : Թիթեղը պետք է պատրաստված լինի մաքուր տիտանից՝ (Ti cp Կոմբինացված անցքերը պետք է թույլ տան տեղադրել կամ կոնաձեռն ֆիքսվող երկակոսանի արգելափակվող պտուտակներ, կամ ստանդարտ պտուտակներ չեզոք կամ սեղմող դիրքերում: Անցքերի ներքին եզրերը տաշվածքները երկայանական եւ լայնական հարթություններում պետք է ապահովեն ստանդարտ պտուտակների անկյան կարգավորումը: Քիչ ինվազիվ եղանակով տեղադրման համար երկու կողմերից պետք է ունենա սեպածեւ սրացումներ: Պետք է ունենա տիտանե իմպլանտների գունային կողավորում:Թողարկման համար, իմպլանտի տեղադրման վերահսկողության իրականացման համար: Արգելափակվող եւ կորտիկալ պտուտակների տրամագիծը պետք է լինի 3,5մմ, սպոնգիոզ պտուտակներինը 4,0մմ: Անցքում ստանդարտ պտուտակի առավելագույն շեղման աստիճանը +/- 40 աստիճան թիթեղի երկայնքով, +/- 15 աստիճան ուղղահայաց:</p> <p>8.1.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 7 , տիտանից- 5 հատ:</p> <p>8.2.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 8 , տիտանից 5 հատ:</p>
--	--	--	--	---

Ընկերության կողմից թիվ 50 չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրի համաձայն՝

50	Կլինիկայում առկա նախաբազկի, անրակի, մեծ ուղքի պրոքսիմալ կոտրվածքներ բուժման համար նախատեսված անատոմյական, մոդելավորված արգելափակվող թիթեղների եւ պտուտակների համալրում	Deputy Synthes	Johnson & Johnson	<p>Անրակի կոտրվածքների բուժման համար նախատեսված սահմանափակ ճնշմամբ, կեռիկով արգելափակվող թիթեղներ ն տեղադրման համար նախատեսված արգելափակվող պտուտակներ:</p> <p>1.)3,5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ երկարությունը 14, 16,18ե20մմի սահմաններում +/- 0.5 մմ: Ունիվերսալ ակոսով է, կորտիկալ և սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար; Ունեն ինքնակտրող, ծակող, փամփուշտաձև ծայր, որը թույլ է տափս առանց նախնական ակոսի ձևավորման տեղագրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը հավասար է ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը կոնաձև է, ունեն երկակոսակի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձև է Պտուտակի մարմնի տրամագիծը 2.9 ±0.05մմ-ի, ակոսի տրամագիծը 3.5 *0.01մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 5.0 ±0.05մմ: Պատրաստված է չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Առանձին փաթեթավորված են, որտեղ պարտադիր նշված են չափը, արտադրողը, ե խմբաքանակի համարը;</p> <p>1.1.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 14մմ- 10հատ:</p> <p>1.2.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող. պտուտակ, երկարությունը 16մմ - է0հատ:</p> <p>1.3.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկայությունը 18մմ - 10հատ:</p> <p>1.4.) 3.5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 20 մմ - 10հատ:</p> <p>2.) Սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով</p> <p>2.1.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12մմ- 2հատ:</p> <p>2.2.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 12մմ-2 հատ:</p> <p>2.3.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անթերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15մմ-2 հատ:</p> <p>2.4.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 3+1, կեռիկի երկարությունը 15մմ-2 հատ:</p> <p>2.5.) Աջ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելաթակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քանակը 4+1, կեռիկի երկարությունը 12մմ-2 հատ:</p>
----	--	----------------	-------------------	---

			<p>2.6.) Ձախ, 3,5 մմ սահմանափակ հպումով արգելափակվող տիտանից թիթեղ կեռիկով, անցքերի քսևակը 4+1, կեռիկի երկարությունը 12մմ-2 հատ:</p> <p>3.) 3,5 մմ տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակներ, 38մմ, 40մմ, 60մմ ե 65մմ երկարությամբ - Արգելափակվող պտուտակ-երկարությունը 38, 40, 60, 65մմ ի չափով, +\ - 0,5 մմ: Ունիվերսալ ակոսով է, կորտիկալ և սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Ունի ինքնակտրող, ծակող, փամփուշտաձև ծայր, որը թույլ է տալիս առանց նախնական ակոսի ձևավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը հավասար է ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը կոնաձև է, ունի երկակոսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձև է Պտուտակի մարմնի տրամագիծը 2.9 ±0.05մմ է, ակոսի տրամագիծը 3.5 ±0.01մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը 5.0 ±0.05մմ: Պատրաստված է տիտան ալյումինում վառադյուն համաձուլվածքից: Առանձին փաթեթավորված են, որտեղ պարտադիր նշված է չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը: Պատրաստված են տիտանի համաձուլվածքից:</p> <p>3.1.) 3,5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 38մմ-13հատ:</p> <p>3.2.) 3,5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 40 մմ-13 հատ:</p> <p>3.3.) 3,5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 60 մմ -13հատ:</p> <p>3.4.) 3,5 մմ Տիտանից, արգելափակված ինքնակտրող, պտուտակ, երկարությունը 65 մմ-13 հատ:</p> <p>4.) 3,5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությւ _ 38 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը 3,5 ±0.01մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Ունի ինքնակ ստող ծայր, նախատեսված սասից նախնական և շիտի օգտագործման համար Առաքվում է առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը՝</p> <p>4.1)3,5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ ,T15, երկարությունը 38 Ամ.- 8 հատ:</p> <p>5.) Մեծ ոլորի պրոբսիմալ կոտրվածքների բուժման համար նախատեսված, 3,5մմ տրամագծով անցքերով թիթեղ: Ունի աջ և ձախ տարբերակներ, պատրաստված է մաքուր տիտանից (Ti cp) : Դիաֆիզար հատվածում անցքերի քանակը 6 և 8, թիթեղների երկարությունը նամապատասխանաբար 107 և 133մմ: Թիթեղները անատոմային համապատասխան մոդուլավորված են: հնարավոր է սուրբստորալ մտցնել 4 ից ոչ պակաս արգելափակվող պտուտակներ, քիչ ինվազիվ տեխնիկայով տեղադրման համար: Թիթեղի պրոբսիմալ հատվածը թույլ է տալիս տեղադրել առնվազն 4 արգելափակաող պտուտակ հորիզոնական հարթությանը զուգահեռ: Պրոբսիմալ հատվածի մնացած պտուտակների կալմնորոշումը համակենտրոն է: Պրոբսիմալ հատվածը ունի առնվազն 3 անցք 2մմ տրամագծով ձողերով նախնական ամրացման համար նախատեսված: Պտուտակները արգելափակվում են գլխիկի վրա անցքի մեջ ունեւացած ակոսի հաշվին: Պտուտակները չեն արգելափակվում տափողակների միջոցով: Ակոսը անցքի մեջ կոնաձև է, իսկ պտուտակի գլխիկը արգալափակումից հետո բարձր է մնում թիթեղից: Դիաֆիզար հատվածը ունի կոմբինացված անցքեր, որը հնարավորություն է տալիս օգտագործել նաև կորտիկալ պստուտակներ: Դիաֆիզար հատվածի վերջում թիթեղի եզրը կոնաձև է, ատրավմատիկ մեթոդով ներդնելու համար: Առավել դիստալ կոմբինացված անցքը հնարավորություն են տալիս օգտագործել կոմպրեսիա արաջացնող սարք: Ունեն լազերային մակնշում, տարբերակող կողով: Առանձին փաթեթավորված են. որտեղ պարտադիր նշված է չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը:</p> <p>5.1.) Աջ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.2.) Ձախ թիթեղ 6 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.3.) Աջ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով- 1 հատ:</p> <p>5.4.) Ձախ թիթեղ 8 դիաֆիզար անցքերով - 1 հատ:</p> <p>6.0) Արգելափակվող ինքնակտրող պտուտակներ: Արգելափակվող պտուտակներ- երկարությունը 12. 14. 16 , 18. 20, 22,մմ +V 0.5 մմ: Ունիվերսալ ակոսով են, կորտիկալ Ա սպոնգիոզ ոսկրերի մեջ ձգման համար: Ունեն ինքնակտրող, ծակող, փամփուշտա:ԱՍ ծայր, որը թույլ է տալիս առանց նախնական ակոսի ձևավորման տեղադրել ոսկրի մեջ: Գլխիկի ակոսի քայլը հավասար է ոսկրային ակոսի քայլին: Պտուտակի գլխիկը կոնաձև է, ունի երկակոսանի ֆիքսող պարույր: Գլխիկի վրա պտուտակահանի ակոսը աստղաձև է Պտուտակի մարմնի տրամագիծը 2.9</p>
--	--	--	--

			<p>± 0.05 մմ-ի է , ակոսի տրամագիծը 3.5 ± 0.01 մմ: Պտուտակի գլխիկի տրամագիծը $5,0 \pm 0.05$ մմ: Պարաստված է չմագնիսացող տիտանի համաձուլվածքից: Առանձին փաթեթավորված են, որտեղ պարտադիր նշված են չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը: Պատրաստված են սփտանի համուլափոճքից:</p> <p>6.1.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 12մմ-3 հատ:</p> <p>6.2.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 14 մմ -6հատ:</p> <p>6.3.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 16 մմ -20հատ;</p> <p>6.4.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 18 մմ -20հատ:</p> <p>6.5.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 20 մմ -11 հասս</p> <p>6.6.) 3.5 մմ արգելափակվող ինքնակտրող պտուտակ, երկարությունը 22 մմ -8 հատ:</p> <p>7.)3.5մմ կորտիկալ ինքնակտրող, տիտանի համաձուլվածքից պտուտակ, T15, երկարությունը 16, 18,20 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը կազմում է $3.5 -0.01$մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Ունի ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական ևջիջի օգտագործման համար: Առանձին փաթեթավորված է, որտեղ պարտադիր նշված են չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը:</p> <p>7.1)3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 16 մմ. - 2 հատ</p> <p>7.2)3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 18 մմ. -8 հատ</p> <p>7.3)3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 20 մմ. -3 հատ</p> <p>8.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 7-8 Սահմանափակ կոնտակտով անկոնային կայունությամբ, 3,5մմ անցքերով արգելափակվող թիթեղ: Կոմպրեսիոն անցքերի քանակը 7, 8 : Թիթեղը պատրաստված է մաքուր տիտանից (Ti cp Կոմպրեսիոն անցքերը թույլ են տալիս տեղադրել կամ կոնաձև ֆիքսվող երկակոսանի արգելափակվող պտուտակներ, կամ ստանդարտ պտուտակներ չեզոք կամ սեղմող դիրքերում: Անցքերի ներքին եզրերը տաշվածքներ երկայանական և լանջական հարթություններում, որը ապահովում է ստանդարտ պտուտակների անկյան կարգավորումը: Քիչ ինվազիվ եղանակով տեղադրման համար երկու կողմերից ունի սեպաձև սրացումներ: Ունի տիտանե իմպլանտների գունային կոդավորում, թողարկման համար, իԱլյախի տեղադրման վերահսկողության իրականացման համար: Արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է 3.5 ± 0.01 մմ, սպոնգիոզ պտուտակներինը $4,0 \pm 0.01$մմ: Անցքում ստանդարտ պտուտակի առավելագույն շեղման աստիճանը +/- 40 աստիճան թիթեղի երկայնքով, +/- 15 աստիճան ուղղահայաց:</p> <p>8.1.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 7, տիտանից- 5 հատ:</p> <p>8.2.) Կոմպրեսիոն արգելափակվող թիթեղ 3.5մմ տրամագծի անցքերով, անցքերի քանակը 8, տիտանից 5 հատ:</p>
--	--	--	--

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 18.11.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները.

- 1) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,

- 3) կետով՝ ակոսի տրամագիծը՝ 3.5 ± 0.01 մմ,
- 6) կետով՝ ակոսի տրամագիծը՝ $3.5+0.01$ մմ,
- 7) կետով՝ կորտիկալ պտուտակ-տրամագիծը կազմում է $3.5-0.01$ մմ,
- 8) կետով՝ արգելափակվող և կորտիկալ պտուտակների տրամագիծը կազմում է $3.5 + 0,01$ մմ, սպոնգիոզ պտուտակներինը $4,0 \pm 0.01$ մմ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովն առաջարկել է Ընկերությանը շտկել արձանագրված, վերը նշված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի 50-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիրը, այն համադրելով Ընկերության կողմից նույն չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից կայացված թիվ 4 և թիվ 5 արձանագրություններն ու շտկման վերաբերյալ ուղարկված ծանուցումը, գտնում է, որ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի դրույթների խախտում, այն է՝ չի արձանագրել 50-րդ չափաբաժնի 4-րդ կետում առկա Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որում նույնպես առկա է անհամապատասխանություն Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին:

50-րդ չափաբաժնի 4-րդ կետով սահմանվել է՝ «4.) 3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 38 մմ. Կորտիկալ պտուտակ- տրամագիծը պետք է լինի 3,5մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Պետք է ունենա ինքնակտրող ծայր, նախատեսված առանց նախնական նշիչի օգտագործման համար: Պետք է լինի առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, եւ խմբաքանակի համարը:»:

Ընկերության կողմից 50-րդ չափաբաժնի 4-րդ կետով առաջարկվել է հետևյալը. «3.5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարություն 38 մմ. Կորտիկալ պտուտակ-տրամագիծը $3,5 \pm 0.01$ մմ, ինքնակտրող, պտուտակահանի անցքը աստղաձև T15: Ունի ինքնակ ստող ծայր, նախատեսված սասանց նախնական և շիտի օգտագործման համար Առաքվում է առանձին փաթեթավորված, որտեղ պարտադիր նշված լինի չափը, արտադրողը, և խմբաքանակի համարը 3,5մմ կորտիկալ ինքնակտրող պտուտակ, T15, երկարությունը 38 մմ. - 8 հատ:»:

Այլ կերպ ասած՝ Հրավերով պահանջվել է «Կորտիկալ պտուտակ-տրամագիծը 3,5 մմ», իսկ ընկերության կողմից առաջարկվել է «Կորտիկալ պտուտակ-տրամագիծը $3,5 \pm 0.01$ մմ», որը, նույնպես, ելնելով հանձնաժողովի կողմից թիվ 4 արձանագրությամբ

արձանագրված անհամապատասխանությունների տրամաբանությունից, ենթակա էր արձանագրման և շտկման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը փաստում է, որ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-20-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը կայացվել է Կարգի 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերով սահմանված պահանջների խախտումներով՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1497-2020 գրությամբ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/43 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

